



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն՝ _____ դասվար _____

Թեմա՝ ՀՀ տարրական դպրոցներում գործող մայրենիի դասագրքերի որևէ թեմատիկ խմբի ստեղծագործությունների ուսումնասիրում և վերլուծություն սովորողների ազգային և համամարդկային արժեքների հնարավորությունների տեսանկյունից _____

Կատարող՝ _____ Ասատրյան Անուշիկ Մամիկոնի _____
Ազգանուն, անուն, հայրանուն

Ղեկավար՝ _____ մ.գ.դ. պրոֆեսոր Զուլիետա Գյուլամիրյան _____
Ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում

Ներածություն

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Կրթության նպատակն անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:

Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգություն փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով:

Աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի ազգային և համամարդկային արժեքներ, այսինքն նրանց պետք է խրախուսել սեփական փորձի, զանազան հարցադրումների օգնությամբ որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, հայրենասիրությունը և այլն: Սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտում շրջապատի կողմից: Այս դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Ուստի աշակերտները իրենց իսկ փորձարարական աշխատանքով պետք է այն դարձնեն իրենցը:

Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով:

Ուստի շատ կարևոր է ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Աշակերտը պետք է հնարավորություն ունենա ազատորեն արտահայտելու իր կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու հերոսների վարքագիծը, իր համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Այսպիսով աշակերտների ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը պետք է լինի մայրենիի դասընթացի կարևոր նպատակներից մեկը:

Թեմայի արդիականությունը: Հետազոտության թեմայի արդիականացումը հիմնավորվում է նրանով, որ տարրական դպրոցում աշակերտների մոտ ձևավորվի արժեհամակարգ, բարոյական հատկանիշներ, մասնավորապես՝ սեր հայրենիքի նկատմամբ, պարտքի զգացում, հասկանա որտեղից է սկսվում հայրենիքը, ինչ ճանապարհ է անցել գոյատևելու համար, ինչպես է հայը պայքարել ու շարունակում պայքարել, որն է իր դերն այդ ազգանվեր գործում:

Այս համատեքստում կարևոր է գործունեության նոր ձևերի ներդրում, որոնցից մեկն է կարդացած ստեղծագործության բովանդակության վերլուծում, գաղափարի բացահայտում ազգային և համամարդկային արժեքների տեսանկյունից:

Հետազոտության նպատակը:

1. Կարդալու կարողության մի քանի արդիական հնարների ներկայացում:
2. Կարդացածի բովանդակության վերարտադրում, մեկնաբանում, որոշակի ազգային արժեքների բացահայտում:
3. Կիրառել իր սովորած արժեքը, այն ձեռք բերել իր փորձառության, մեկնաբանության, դիտարկման հիման վրա:
4. Տարբեր հնարներով ոգեշնչել աշակերտին որոշակի գործողությունների և նպաստել համամարդկային արժեքի ձևավորմանը և ամրապնդմանը:
5. Ձևավորել ազգային և համամարդկային արժեքներ կրող ազատ գիտակից ու պատասխանատու անհատ և քաղաքացի՝ ունակ գնահատելու անհատ-հասարակություն փոխազդեցությունը և փոխակերպումները պատմական տարբեր շրջափուլերում:

Ուսումնասիրության մեթոդները:

1. Դասալսում գործընկերների մոտ և արդյունքների վերլուծություն:
2. Մասնագիտական գրականության ուսումնասիրում և արտացոլված սկզբունքների դիտարկում:
3. Հարցաթերթիկային ուսումնասիրություն:

4. Փորձարարական դասերի վարում և արդյունքների ամփոփում :

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Երեխայի արժեհամակարգի ձևավորման շուրջ առկա գիտատեսական գրականության ուսումնասիրում , վերլուծություն:

Գործնական հետազոտության աշխատանքների արդյունքները կարող են հետաքրքրել ուսուցիչներին , նրանց համար նյութ դառնալ թեմայի ուսուցման ժամանակ աշխատանքների ընթացքը կազմակերպելու համար:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է.

. բովանդակությանից

.թեմայում ընդգրկված դասերի վերլուծությունից

.եզրակացությունից

.օգտագործված գրականության ցանկից

ՀՀ տարրական դպրոցներում գործող մայրենիի դասագրքերի որևէ թեմատիկ խմբի ստեղծագործությունների ուսումնասիրում և վերլուծություն սովորողների ազգային և համամարդկային արժեքների, հնարավորությունների տեսանկյունից:

Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկաչոք:

Քաջը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:

Հայրենիքի պաշտպանությունը յուրաքանչյուր մարդու սրբազան պարտականությունն է. չէ՞ որ հայրենիքը մայրդ է, հարազատներդ, քո տունը, գյուղը կամ քաղաքը, քո երկրի սուրբ եկեղեցիները, այն ամենը, որ միասին կոչվում է հայրենի հող:

Հայրենիքը պաշտպանելիս են ծնվում իրական հերոսները:

Որպես հետազոտական աշխատանքի թեմա ընտրելով «Մեր հայրենիքի հերոս պաշտպանները» թեմատիկ խումբը, իմ առջև նպատակ եմ դրել ձևավորել ազգային և համամարդկային արժեքներ կրող ազատ, գիտակից ու պատասխանատու քաղաքացի՝ ունակ գնահատելու իր դերը:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում աշակերտի մոտ պետք է ձևավորվի կարդալու կարողություն, քննադատական մտածողություն, հաղորդակցվելու, վերլուծելու, հարցադրումներ կատարելու, լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմավորելու կարողություններ և հմտություններ:

Ծանոթանա և ճանաչի ազգային հերոսներին, փորձի գտնել իր տեղն ու դերը հայրենիքը շենացնելու և պաշտպանելու գործում:

Աշակերտի աշխարհաճանաչողությունը սկսելու է իրենից, իր հայրենիքից:

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով պետք է կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ընդգրկվածությունը ուսուցման գործընթացին:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում սովորողը ծանոթանում է իր հայրենիքի մշակույթին ու կենցաղին, ավանդապատումներին, ավանդույթներին, նաև՝ գրական ստեղծագործության ձևերին:

Առաջին խնդիրը բնականաբար պետք է լինի կարդալու որակական հատկանիշների ձևավորում, ընթերցողական կարողության զարգացում, ընթերցանության նկատմամբ սիրո և հետաքրքրության ձևավորում: Հայրենիքի վերաբերյալ ունեցած աշակերտների գիտելիքներին ծանոթանալու համար բաժանել հարցաթերթիկներ.

1. Ո՞րն է իմ հայրենիքը
2. Ո՞րտեղից է սկսվում այն ինձ համար
3. Ի՞նչ գիտեմ նրա մասին
4. Ի՞նչը կուզենայի փոխել.....

.....

Հաջորդ դասին աշակերտները ներկայացնում են իրենց հարաթերթիկները , լրացնում միմյանց:

Ասք լավաշի մասին

Թեմատիկ շարքն սկսվում է «Ասք լավաշի մասին» նյութով: Այն ուսումնասիրելու արդյունքում աշակերտը հասկանում է , որ թշնամուն կարելի է հաղթել ոչ միայն զենքով, այլ նաև խելքով: Այստեղ որպես արժեք նա տեսնում է հացը (լավաշ): Աշակերտը սովորում է, թե որքան դժվար է ստեղծել հացը, ինչ աշխատանք համբերություն, սեր է պահանջվում մարդկանցից, մինչև որ ցորենի հատիկից համեղ ու բուրավետ հաց է ստացվում: Այստեղ կատարվում է նաև անդրադարձ ազգային խոհանոցին:

Առաջարկվող գործունեության ձևեր .

1. Հարցազրույց տատիկ պապիկների հետ :
2. Ուսումնասիրություն և եզրակացություններ:
3. Թղթապանակի ստեղծում:

Ուսումնասիրության արդյունքում աշակերտները բացահայտեցին և ներկայացրին հացը որպես արժեք և նրա ստեղծման ամբողջ ճանապարհը:

Այն աշակերտները, ովքեր տատիկ պապիկների հետ հարցազրույց էին անցկացրել , ներկայացրին ազգային խոհանոցը, իսկ հինգ աշակերտ ստեղծել էր թղթապանակ ազգային խոհանոցի ճաշատեսակների մասին:

Սասունցի Դավիթ

Ներկայացված է հատված էպոսից: Մինչ բուն նյութին անցնելը աշակերտները ծանոթանում են ստեղծագործության նոր ժանրին՝ էպոսին, բացահայտում, որ Դավիթը վիպերգի հերոսն է, ով մարմնավորում է հայ ժողովրդին: «Սասունցի Դավիթ» էպոսի օրինակով աշակերտը կուսումնասիրի հայ ազգի մշակութային առանձնահատկությունները, որը յուրաքանչյուրին դարձնում է ինքնատիպ:

Հետազոտության հարցը.

1. Պատմական աղբյուրի ծանոթացում:
2. Ճանաչել հայ հոգևոր և նյութական մշակույթի արժեքները էպոսում, գնահատել դրանց համամարդկային նշանակությունը, հարգալից և հոգատար վերաբերմունք ունենալ այդ արժեքների նկատմամբ:
3. Գնահատել խաղաղասիրությունը , արդարությունը, փոխադարձ հարգանքը և ընկերասիրությունը:
4. Գիտակցել սեփական հայրենիքի ազատության և արդարության համար պայքարելու անհրաժեշտությունը:

Ծանոթացում բովանդակությանը և կերպարներին.

Բովանդակությանը ծանոթանալու համար համառոտ պատմել այն , ընթերցել դասագրքի նյութը:

- Սանասարը և Բաղդասարը կառուցում են Սասունը՝ ազատության և արդարության վրա հիմնված հասարակության ստեղծումը:

- Մեծ Միերը , նրա սխրանքները և սխալները: Հավատարմության, վստահության, հարգանքի և հավասարության կարևորումը:
- Դավիթը ` մարդկային անկեղծության, պարզության, ազնվության, մանկական միամտության ուժը մարմնավորող հերոս:
- Փոքր Միերը ` հերոս, հաղթական ասպետ, որի սիրտը բարի է ու մաքուր: Միերի հեռանալը և ուղերձը աշխարհի բարի դառնալու մասին:

Ազատությունը արժեք է, որի համար պետք է պայքարել:

Առաջարկվող գործունեության ձևեր.

- Դեպքերի ուսումնասիրում (մուլտֆիլմի դիտում):
- Վերլուծություն, կերպարների համեմատում , եզրակացության հանգում:
- Աղբյուրի ուսումնասիրում:
- Բանավեճ:

Մեթոդական հնար.

<p><u>Ի՞նչ էի տեսնում կարդալիս</u></p> <p>Սարեր, լեռներ՝ քարքարոտ երկիր, ձի, անվախ տղա, զորք, վախկոտ թշնամի, խոր փոս, առյուծ՝՝</p>	<p><u>Ի՞նչ ձայներ էի լսում</u></p> <p>Ձիերի խրխնջոց, դոփյուն, Ձենով Օհանի գոռոցը, Սասունցի <input type="checkbox"/> Դավիթի <input type="checkbox"/> ձայնը, առյուծի մռնչյուն՝՝՝</p>
<p><u>Ի՞նչ էի զգում, մտածում</u></p> <p>Հպարտություն, ուժ, միասնություն , հայրենիքը <input type="checkbox"/> պաշտպանելու ցանկություն՝՝՝</p>	<p><u>Նոր վերնագիր</u></p> <p>Անվախ Դավիթը Ին հայրենիքի հերոսը</p>

Այս մեթոդական հնարը կարելի է գործածել իմաստի ընկալման փուլում: Աշակերտներին բաժանել քառաբաժան թղթեր, որպեսզի լրացնեն, որից հետո մեկերկու աշակերտ ներկայացնում են իրենց աշխատանքը , իսկ մյուսները կատարում են լրացումներ:

Լեռները հայոց

Հայրենասիրությունը ապահովվում է ոչ թե խոսքով, այլ ` գործով:

Վ. Բելինսկի (ռուս գրականություն)

Ով չի սիրում իր երկիրը, ոչինչ չի կհարող սիրել:

Ջ. Բայրոն

Հետազոտության հարցերը.

1. Ճանաչի իր հայրենիքը (լեռնային երկիր):
2. Հայրենիքի փառքի տարածումը:
3. Ի՞նչ կանես դու քո հայրենիքի համար:

Վերջնարդյունք.


Արդյունքում աշակերտը ծանոթանում է հայրենի բնաշխարհին:

Բացահայտում, թե ովքեր և ինչպես են անմահ պահում հայրենիքի փառքը:

Իսկ առաջին հերթին փորձում են սովորել բանաստեղծությունն արտասանել այնպես, որ երևա հայրենիքի փառքի ուժը, միասնությունը, ինչու չէ, նաև տեսնեն հերոսներին: Նյութին ծանոթանալուց հետո աշակերտներին տալ թղթեր և գունավոր մատիտներ: Առաջարկել նկարել այն, ինչը կարևորում են բանաստեղծության մեջ:

Որպես տրամաբանակն շարունակություն անդրադառնալ «Փառքի հերոսներ» թեմային:

Մտագրողի կամ մտքերի տարափ



Այս մեթոդի հիմնական նպատակը աշակերտների կենտրոնացումն է նոր նյութին:

1. Ուսուցչի կողմից գրի է առնվում բանալի բառը:
2. Գրի է առնվում աշակերտների կողմից հնչեցված բոլոր բառերը:
3. Ընթերցվում է նոր նյութը, հետո աշակերտները գտնում են գծապատկերի այն գրառումները, որոնք համապատասխանում են նյութին:

Բացահայտել բանաստեղծը ում և ի՞նչն է փառաբանում, հայոց լեռներն ի՞նչպես են օգնել հայ քաջերին, ի՞նչ է մեր օրյա Ավարայրը:

Հետազոտական աշխատանք

1. Տեղեկություններ հավաքել Ավարայրի ճակատամարտի և Արցախյան շաժման մասին:
2. Տեղեկություն հավաքել հայ հայտնի որևէ հերոսի մասին:
3. Ստեղծել դասարանային պաստառ «Իմ հայրենիքի հերոսները» թեմայով:
4. Ներկայացնել գիրը, որպես ազգային արժեք և նրա դերը հայ ժողովրդի կյանքում:

Հետազոտական աշխատանքը հանձնարարվել է երրորդ դասարանի աշակերտներին: Աշխատանքին մասնակցել են 25 աշակերտ, նրանցից 10-ը տեղեկություն է հավաքել Ավարայրի ճակատամարտի մասին և ներկայացրել դասարանին: 9 աշակերտ տեղեկություն է հավաքել Արցախյան շարժման մասին: Իսկ 1 աշակերտ թղթապանակ էր կազմել Արցախյան պատերազմների մասնակից հերոսների մասին: 2 աշակերտ ոչ մի տեղեկություն չէր հավաքել: Սակայն աշակերտների կողմից կատարված աշխատանքները դասարանում ներկայացնելուց հետո նրանք կարողացան որոշ գիտելիքներ ձեռք բերել հանձնարարված նյութի շուրջ:

3 աշակերտ տեղեկություն էր հավաքել Մեսրոպ Մաշտոցի մասին: Նրանց հանձնարարվել էր կազմել թղթապանակ: Աշակերտները հանձնարարված աշխատանքները կատարել էին բավականին լավ, որտեղ ներկայացվել էր, թե ինչո՞ւ առաջացավ անհրաժեշտություն ստեղծել հայերեն տառերը, ո՞վ ստեղծեց այն, ի՞նչ արեց Մեսրոպ Մաշտոցը տառերը ստեղծելուց և հայրենի Վաղարշապատ վերադառնալուց հետո, ո՞րն է հայերեն առաջին նախադասությունը:

Աշակերտներին հանձնարարվեց հավաքագրած տվյալները ներկայացնել զուգահեռ դասարանում: Ինչը տվեց իր դրական արդյունքը: Ընդ որում զուգահեռ դասարանի աշակերտներին հանձնարարվեց լրացուցիչ տեղեկություններ ներկայացնել: Նրանք ներկայացրին ավանդազրույց այն մասին, թե ինչո՞ւ էր այբուբենում առաջատարը Ա տառը:

Կատարված աշխատանքը բավականին արդյունավետ էր: Աշակերտները լիարժեք պատկերացրին թե ինչու տառերը դարձան զինվորներ, բացահայտեցին զինվորի դերը հայրենիքի պաշտպանության հարցում:

Ժողովրդական այսպիսի մի առած կա. «Ուժով բացված վարդը հոտ չի ունենա» : Փորձիր ուժով բացել վարդի թերթիկները և կտեսնես, որ վարդը կթռչնի ու իր անուշ հոտով քեզ հաճույք չի պատճառի: Այդպես էլ կյանքում է. ուժով միշտ չէ, որ կարելի է հաջողության հասնել:

Բռնի ուժը չարիք է մնում: Հայ ժողովուրդը բռնություն չի սիրել:

«Մեր հայրենիքի հերոս պաշտպանները» թեմայի ամփոփում

Դասի ամփոփման համար աշակերտներին բաժանվել է հարցաթերթիկներ, որոնց նրանք փորձել են պատասխանել թեման ուսումնասիրելուց հետո ստացած գիտելիքների հիման վրա:

Հարցաթերթիկ

1. Ի՞նչ գիտեի իմ հայրենիքի մասին.....
2. Ի՞նչ սովորեցի.....
3. Ինչպիսի՞ն է իմ հայրենիքը.....
4. Իմ հայրենիքի հերոսները.....
5. Ի՞նչ կանեմ հայրենիքիս համար.....

Հարցաթերթիկը լրացնելուց և ներկայացնելուց հետո անցակցվեց բանավեճ

«Իմ հայրենիքը Հայաստանն է» թեմայով:

Դասարանը բաժանվեց 2 խմբի: Մի խմբին հանձնարարվեց ապացուցել , որ հայրենիքը հզոր է իր հերոսներով, որ հայրենիքը մեկն է, որ յուրաքանչյուր մարդ ունի իր դերը հայրենիքի պաշտպանության գործում: Երկրորդ խումբը փորձում է հակադարձել առաջին խմբին և ապացուցել, որ չկա հայրենիք, կա վայր որտեղ մարդը ապրում է , չկա պայքար հայրենիքի համար, չկան ազգային հերոսներ:

Բանավեճն անցավ հետաքրքիր և արդյունավետ:

Թեմայի ուսումնասիրության ավարտին աշակերտները հասկացան , որ հայրենիքը մեկն է, հզոր է , անպարտ, պաշտպանված իր հերոսներով: Եվ որ իրենք էլ հայրենիքի մի մասնիկն են, որ կան արժեքներ, որոնք անփոխարինելի են:

Դժբախտ է այն երկիրը, որ հերոսներ չունի:

Բ. Բելխտ



Եզրակացություն

Տարրական դասարաններում մայրենիի դասաժամին ուսուցանված թեմաների արդյունավետության բարձրացման նպատակով կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները ցույց տվեցին, որ

- ապահովվում է յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում
- զարգանում է սովորողի քննադատական, վերլուծական, հետազոտական, ստեղծագործական մտածողությունը
- նկատվում է հաղորդակցման համագործակցային հմտությունների զարգացում
- ինքնակազմակերպման հմտություն
- գիտության , տեխնոլոգիայի և մշակույթի ժամանակակից նվաճումներն օգտագործելով վեր է հանում հայ ժողովրդի պատմական անցյալը և դրա դերակատարումը համաշխարհային պատմության մեջ
- զարգացնում է սովորողի մոտ ազգային պետական արժեքային համակարգը
- վեր է հանում առօրյայում առնչվող խնդիրներ և օգնում գտնել լուծման նորարար եղանակներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 3», Երևան, Էդիթ Պրինտ, 2014
2. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի մեթոդական ուղեցույց, 2013:
3. Գյուլամիրյան Զ., Մայրենի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան 2015:
4. Գյուլամիրյան Զ., « Ապագա դասվարների հետազոտական ունակությունների ձևավորումը, որպես բարձրակարգ մասնագիտական պատրաստականության հիմանկան ցուցանիշը», «Մանկավարժական միտք», Զանգակ97, 2014:
5. Հովհաննես Թումանյան, «Սասունցի Դավիթ»: